Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահաբաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն երբ դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահաբաժինները բացահայտվում են:

Չբաշխված շահույթ

Չբաշխված շահույթը ներառում է ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ

Հիմնական միջոցների վերագնահատման աճը օգտագործվում է գրանցելու համար հիմնական միջոցների իրական արժեքի աճը և նվազումը այն չափի, որ նման նվազումը վերաբերում է նույն ակտիվի աճին, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերի վերագնահատման պահուստ

Այս պահուստը գրանցում է վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի փոփոխությունները:

4.18 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրորեն հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրություն իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

Եկամուտները և ծախսերը ներկայացվում են զուտ արժեքի հիման վրա, միայն երբ դա թույլատրվում է համաձայն ՖՀՄՄ, կամ մի խումբ համանման գործարքների օգուտի և վնասի համար, ինչպիսին հանդիսանում է Ընկերության առևտրային գործունեությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՄ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Ընկերության ղեկավարությունը կատարի կարևորագույն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, հիմնված պատմական փորձի և այլ գործոնների վրա, հիմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները հիմնվում են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Ապահովագրության պայմանագրերի համար գնահատումները պետք է կատարվեն ինչպես հաշվեկշռի ամսաթվի դրությամբ ներկայացված ակնկալվող պահանջների վերջնական արժեքի համար, այնպես էլ այն ակնկալվող պահանջների արժեքի համար, որոնք տեղի են ունեցել, սակայն դեռևս չեն ներկայացվել հաշվեկշռի ամսաթվի դրությամբ (ՏՉՊՊ): Պահանջների վերջնական արժեքը հստակորեն որոշելու համար կարող է զգալի ժամանակ պահանջվել և որոշ պայմանագրերի դեպքում, տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջները կազմում են հաշվեկշռի պարտավորությունների մեծ մասը:

Այս գնահատումների հիմքում ընկած հիմնական ենթադրությունը կայանում է նրանում, որ Ընկերության անցյալ պահանջները կարող են օգտագործվել պահանջների հետագա զարգացումը և, հետևաբար նաև, պահանջների վերջնական արժեքը կանխատեսելու համար: Որպես այդպիսին, այս մեթոդներն արտացոլում են վճարված և տեղի ունեցած վնասները, յուրաքանչյուր պահանջի գծով միջին ծախսերը, նախորդ տարիներում հետազոտված պահանջների քանակը և ակնկալվող վնասաբերության ցուցանիշները: Պահանջների պատմական զարգացումը հիմնականում վերլուծվում է տվյալ տարվա համար, սակայն կարող է նաև վերլուծվել աշխարհագրական տարածքից ելնելով, ինչպես նաև ըստ նշանակալի ապահովագրական դասերի: Հիմնական դժվարությունը կայանում է նրանում, որ Հայաստանի ապահովագրական շուկան համեմատաբար նոր է և անկայուն, այդուամենայնիվ, գրեթե անհնար է կատարել ապագա գնահատումներ՝ հիմնվելով պատմական տվյալների վրա:

Ընկերությունը գնահատում է ներկայացված պահանջները «դեպք-առ-դեպք» մեթոդով, բացառությամբ ապահովագրության այն դասերի, որտեղ պահանջների՝ հաշվետու ամսվա և դրան նախորդող տասնմեկ ամիսների միջին ամսական քանակը հիսուն և ավելի է, և պահանջների հատուցումների չափերն այդ ամիսների ընթացքում էականորեն չեն տատանվել: Նման դասերի համար օգտագործվում է «միավոր պահանջի հատուցման միջին չափի» գնահատում: ՏՉՊՊ-ն գնահատվում է՝ օգտագործելով վիճակագրական մեթոդներ, որոնք հիմնվում են անցյալ տարիների պատմական տվյալների վրա:

Ղեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից պահուստներ

Ընկերությունը գնահատում է խնդրահարույց ղեբիտորական պարտքերը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Մասնավորապես, ղեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, երբ անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել: Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբերվել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների:

Նշանակալի ղեբիտորական պարտքերի համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Ընկերությունը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ այն ռիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր: Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատթարացումը երկրի և արդյունաբերության ռիսկում և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թերությունները կամ դրամական հոսքերի նվազումները:

Լերդրումային արժեթղթերի դասակարգում

Ընկերության ներդրումային արժեթղթերը ներառում են պետական պարտատուներ: Սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է այլ համապարփակ եկամտում:

Կապակցված կողմերի հետ գործառնություններ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ կապակցված կողմերի հետ: Գործող շուկայի բացակայության դեպքում Ընկերությունը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները հիմնվում են նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույքների վերլուծությունների վրա:

Հարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնաբանությունների: Տես 29 ծանոթագրությունը:

6 Հիմնական միջոցներ

Հազար ՀՀ դրամ

	Շենքեր	Համակարգ- չային տեխնիկա և կայի միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Գրասեն- յակային սարքա- վորումներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Վերստացված ԱՐԺԲ						
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	430,386	56,367	48,289	26,394	26,068	587,504
Ավելացում	758	11,550	31,000	3,360	33,177	79,845
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	431,144	67,917	79,289	29,754	59,245	667,349
Ավելացում	2,329	7,010	23,642	1,865	3,594	38,440
Օտարում	-	-	(9,220)	-	-	(9,220)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	433,473	74,927	93,711	31,619	62,839	696,569
ԿՈՒՏԱԿԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆ						
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	106,414	34,053	26,976	13,292	11,465	192,200
Հատկացումներ	7,108	6,933	4,819	2,082	4,734	25,676
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	113,522	40,986	31,795	15,374	16,199	217,876
Հատկացումներ	7,128	9,720	8,413	3,369	6,767	35,397
Օտարում	-	-	(8,123)	-	-	(8,123)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	120,650	50,706	32,085	18,743	22,966	245,150
ՀԱՇՎԵԿՇՈՒՄՅՈՒՆ ԱՐԺԲ						
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	312,823	24,221	61,626	12,876	39,873	451,419
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	317,622	26,931	47,494	14,380	43,046	449,473
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	323,972	22,314	21,313	13,102	14,603	395,304

Ակտիվների վերագնահատում

Ընկերության շենքի վերջին վերագնահատումը կատարվել է 2010թ. հունվարի 21-ին «Անթ Ռ-իեթի» ՄՊԸ անկախ գնահատողների կողմից՝ կիրառելով համեմատական, ծախսային և եկամտային մեթոդները: Իրական արժեքով շենքի գնահատման համար Ղեկավարությունը հիմք է ընդունում անկախ գնահատողների կողմից ներկայացված արդյունքները:

Ղեկավարության գնահատմամբ 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շենքերի վերագնահատված արժեքն էականորեն չի տարբերվում դրանց շուկայական արժեքից:

Եթե շենքերը ներկայացվեին սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, հաշվեկշռային արժեքը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կկազմեր 249,873 հազար դրամ (2013թ.՝ 255,531 հազար դրամ):

Ամբողջությամբ մաշված ակտիվներ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների ցանկում ներառված ամբողջությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 45,645 հազար դրամ (2013թ.՝ 43,090 հազար դրամ):

Հիմնական միջոցների սահմանափակումներ

2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա հիմնական միջոցների (2013թ.՝ նույնպես):

7 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
ԱԿՋԲՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ		
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	4,001	4,001
Ավելացում	5,850	5,850
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,851	9,851
Ավելացում	2,861	2,861
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	12,712	12,712
ԱՍՈՐՏԻԶԱՑԻԱ		
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	1,299	1,299
Մասհանումներ	731	731
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2,030	2,030
Մասհանումներ	1,046	1,046
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	3,076	3,076
ՀԱՇՎԵԿՇՐԱՅԻՆ ԱՐԺԵՔ		
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,636	9,636
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	7,821	7,821
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	2,702	2,702

2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետել պարտավորությունների դիմաց գրավադրված կամ որևէ այլ սահմանափակման ենթակա ոչ նյութական ակտիվներ (2013թ.՝ նույնպես):

8 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Կանխավճարներ հատուցումների գծով	124,738	94,183
Այլ կանխավճարներ և այլ դեբիտորներ	88,314	196,451
Առհաշիվ տված գումարներ	21,390	44,475
Կանխավճարներ այլ հարկերի գծով	7,571	5,889
Բռնագանձված ակտիվներ	1,387	1,387
Պաշարներ	13,000	13,000
Արժեզրկման կորուստների պահուստ	(83)	(1,825)
Ընդամենը այլ ակտիվներ	256,317	353,560

Բռնագանձված գրավն իրենից ներակայացնում է սուբրոգացիայի հետևանքով Ընկերության սեփականությանն անցած հող, որը չի զբաղեցվում Ընկերության կողմից:

Այլ ակտիվների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	-
Տարվա ծախս	1,659
Դուրսգրում	(4)
Վերականգնում	170
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,825
Տարվա ծախս	9,803
Դուրսգրում	(11,622)
Վերականգնում	77
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	83

9 Հետաձգված ձեռքբերման ծախսեր

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է տվյալ ժամանակաշրջանի համար հետաձգված ձեռքբերման ծախսերի շարժը.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	35,705
Հետաձգված ձեռքբերման ծախսեր Ծախսի ճանաչում (ծանոթ. 25)	329,748 (252,294)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	113,159
Հետաձգված ձեռքբերման ծախսեր Ծախսի ճանաչում (ծանոթ. 25)	349,339 (317,101)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	145,397

10 Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Պահանջներ ապահովադիրների և գործակալների նկատմամբ	547,877	376,678
Պահանջներ վերաապահովագրողների նկատմամբ	44,532	33,220
Պահանջներ միջնորդների նկատմամբ	285	-
Սուբրոգացիա	30,563	40,539
Արժեզրկման կորուստների պահուստ	(57,300)	(27,124)
Ընդամենը ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	565,957	423,313

Տարվա ընթացքում արժեզրկումից պահուստի շարժը ապահովագրության գծով դեբիտորական պարտքերի գծով հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	19,104
Տարվա հակադարձում	(4,162)
Դուրս գրում	(4,534)
Վերադարձ	16,716
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,124
Տարվա ծախս	43,556
Դուրս գրում	(19,516)
Վերադարձ	6,136
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	57,300

11 Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Տրամադրված փոխառություններ	4,304	6,489
Արժեզրկման կորուստների պահուստ	(182)	(201)
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	4,122	6,288

Փոխառությունների գծով արժեզրկման կորուստների պահուստի շարժը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	50
Տարվա ծախս	151
Վերականգնում	-
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	201
Տարվա ծախս	857
Դուրս գրում	(1,146)
Վերականգնում	270
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	182

12 Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Ավանդներ	1,294,668	1,142,045
Ընդամենը ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	1,294,668	1,142,045

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական կազմակերպություններում ավանդները՝ 750,866 հազար դրամ գումարով (58%) կենտրոնացված են 3 բանկերում (2013թ.՝ 624,962 հազար դրամ (55%) կենտրոնացված 3 բանկերում):

6,000 հազար դրամ գումարով բանկային ավանդներ գրավադրված են Ընկերության կողմից ստացված բանկային երաշխիքի դիմաց (2013թ.՝ 67,000 հազար դրամ, վարկի դիմաց (տես ծանոթ. 19)):

13 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Զգնանշվող ներդրումներ		
ՀՀ կառավարության արժեթղթեր	-	10,991
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	35,000	35,000
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	35,000	45,991

Բոլոր պարտքային արժեթղթերն ունեն հաստատուն տոկոսներ:

Զգնանշված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերի իրական արժեքը չափվում է՝ կիրառելով գնահատման մեխանիզմ, որն օգտագործում է ներկա շուկայական դրույքները՝ ապագա դրամական հոսքերը գեղջելու համար:

Բոլոր չգնանշված վաճառքի համար մատչելի բաժնեմասային արժեթղթերը գրանցված են ինքնարժեքով, քանի որ իրական արժեքը չի կարող արժանահավատորեն գնահատվել: Այս ներդրումների համար չկա գնանշվող շուկա և Ընկերությունը նախատեսում է դրանք պահել երկար ժամկետով:

Վաճառքի համար մատչելի արժեթղթերն ըստ արդյունավետ տոկոսադրույքների և ժամկետների ներառում են.

Հազար ՀՀ դրամ	2014		2013	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ կառավարության արժեթղթեր	13.50	2015	9.08	2015

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը 133,329 հազար դրամով իրական արժեքով (2013թ.՝ 126,395 հազար դրամ) վաճառվել են երրորդ անձանց ռեպո համաձայնագրերով՝ 6 ամիսը չգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես ռեպո համաձայնագրերով գրավադրված արժեթղթեր հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (Ծանոթ. 20):

14 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Կանխիկ դրամական միջոցներ	50,129	40,074
Բանկային հաշիվներ	30,287	135,489
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	80,416	175,563

Վերը նշված մնացորդային արժեքները մոտավորապես հավասար են հաշվեկշռային ամսաթվի դրությամբ իրական արժեքներին:

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 26,043 հազար դրամ գումարով (86%) կենտրոնացված է մեկ բանկում (2013թ.՝ 122,144 հազար դրամ (90%) կենտրոնացված է 2 բանկերում):

15 Կապիտալ

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության գրանցված և ամբողջությամբ վճարված բաժնետիրական կապիտալը կազմում էր 1,495,000 հազ դրամ: Համաձայն Ընկերության կանոնադրության, բաժնետիրական կապիտալը կազմված է թվով 149,500 բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 10,000 դրամ անվանական արժեքով:

2014թ. և 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են.

Հազար ՀՀ դրամ	2014		2013	
	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնենասր վճարված կապիտալում, %	Վճարված բաժնետիրական կապիտալ	Բաժնենասր վճարված կապիտալում, %
Խաչատուր Սուքիասյան	299,000	20	299,000	20
Սարիբեկ Սուքիասյան	299,000	20	299,000	20
Ռոբերտ Սուքիասյան	299,000	20	299,000	20
Էդուարդ Սուքիասյան	299,000	20	299,000	20
Հայելոնոմբանկ ԲԲԸ	299,000	20	299,000	20
	1,495,000	100	1,495,000	100

2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից հետ գնված բաժնետոմսեր չեն եղել (2013թ.՝ նույնպես):

Սովորական բաժնետոմսերի բաժնետերերը իրավունք ունեն ստանալու շահաբաժին և մեկ ձայնի իրավունք Ընկերության տարեկան և ընդհանուր ժողովներում:

Բաշխման ենթակա Ընկերության պահուստները սահմանափակվում են կուտակված շահույթով՝ հաշվարկված համաձայն ՀՀ օրենսդրության: Բաշխման ոչ ենթակա միջոցները ներկայացված են գլխավոր պահուստով, որը ստեղծված է համաձայն ՀՀ օրենսդրության պահանջների՝ ընդհանուր ֆինանսական ռիսկերը, ներառյալ հնարավոր կորուստները և այլ չնախատեսված ռիսկերը և ծախսերը փոխհատուցելու նպատակով:

Պահուստը ստեղծվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որը նախատեսում է պահուստի ստեղծում այդ նպատակների համար ոչ պակաս քան հաշվապահական հաշվառման հաշիվներում արտացոլված բաժնետիրական կապիտալի 15 %-ի չափով:

16 Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2014			2013		
	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություն	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
Չվաստակած ապահովագրական վճարներ	1,081,612	(73,655)	1,007,957	809,188	(76,717)	732,471
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	91,240	(7,963)	83,277	67,259	(4,850)	62,409
Ներկայացված պահանջներ	170,702	(18,307)	152,395	160,082	(13,424)	146,658
Դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,343,554	(99,925)	1,243,629	1,036,529	(94,991)	941,538

Ծանոթագրության հաջորդ աղյուսակները ցույց են տալիս ապահովագրական պարտավորությունների և համապատասխան վերապահովագրական ակտիվների գծով փոփոխությունները հաշվետու ժամանակաշրջանների համար.

Չվաստակած ապահովագրավճարներ

Հազար ՀՀ դրամ	Ապահովագրական պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	464,574	(66,186)	398,388
Ընթացիկ ժամանակաշրջանի ապահովագրավճարներ	2,484,775	(206,610)	2,278,165
Ընթացիկ ժամանակաշրջանում վաստակած ապահովագրավճարներ	(2,140,161)	196,079	(1,944,082)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	809,188	(76,717)	732,471
Ընթացիկ ժամանակաշրջանի ապահովագրավճարներ	2,983,156	(201,582)	2,781,574
Ընթացիկ ժամանակաշրջանում վաստակած ապահովագրավճարներ	(2,710,732)	204,644	(2,506,088)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,081,612	(73,655)	1,007,957

Պահանջների պահուստ

Հազար ՀՀ դրամ	Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	Վերապահովագրական ակտիվներ	Զուտ պարտավորություններ
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	166,430	(17,572)	148,858
ՆՉՊՊ և ՏՉՊՊ ընդհանուր փոփոխություն	1,191,072	(84,285)	1,106,787
Վճարված հատուցումներ	(1,130,161)	83,583	(1,046,578)
2013 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	227,341	(18,274)	209,067
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	67,259	(4,850)	62,409
Ներկայացված պահանջներ	160,082	(13,424)	146,658
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	227,341	(18,274)	209,067
ՆՉՊՊ և ՏՉՊՊ ընդհանուր փոփոխություն	1,630,695	(148,939)	1,481,756
Վճարված հատուցումներ	(1,596,094)	140,943	(1,455,151)
2014 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	261,942	(26,270)	235,672
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջներ	91,240	(7,963)	83,277
Ներկայացված պահանջներ	170,702	(18,307)	152,395
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	261,942	(26,270)	235,672

17 Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Ապահովադիրներին վճարվելիք գումարներ	38,623	20,654
Վերաապահովագրողներին վճարվելիք գումարներ	61,713	89,395
Գործակալներին, բրոքերներին և միջնորդներին վճարվելիք գումարներ	1,413	1,249
Ընդամենը ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	101,749	111,298

18 Այլ պարտավորություններ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Վճարվելիք գումարներ	18,913	20,377
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	34,938	36,948
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	53,851	57,325
Պարտավորություններ հարկերի գծով՝ բացառությամբ շահութահարկի	18,944	17,413
Այլազա ժամանակաշրջանի եկամուտներ	4,004	4,958
Ընդամենը ոչ ֆինանսական ակտիվներ	22,948	22,371
Ընդամենը այլ պարտավորություններ	76,799	79,696

Այլազա ժամանակաշրջանի եկամուտները վերաբերում են հետաձգված վերաապահովագրության միջնորդավճարներին, որոնց շարժը ներկայացված է ստորև.

Հազար ՀՀ դրամ	Ընդամենը
2013թ. հունվարի 1-ի դրությամբ	13,648
Հետաձգված վերաապահովագրության միջնորդավճարներ եկամուտի ճանաչում (ծանոթ. 22)	11,263 (19,953)
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,958
Հետաձգված վերաապահովագրության միջնորդավճարներ եկամուտի ճանաչում (ծանոթ. 22)	9,465 (10,419)
2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	4,004

19 Բանկերից ստացված վարկեր

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Բանկերից ստացված վարկեր	-	60,217
Ընդամենը բանկերից ստացված վարկեր	-	60,217

20 Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր

Հազար ՀՀ դրամ	Ակտիվ		Պարտավորություն	
	2014	2013	2014	2013
Ներդրումային արժեթղթեր (ծանոթ. 13)	133,329	126,395	133,592	125,931
	133,329	126,395	133,592	125,931

Գրավադրված արժեթղթերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք գրավադրված են հետգնման պայմանագրերով բանկերում, գործընկերոջ կողմից վաճառելու և կրկին վերագրավադրելու իրավունքով:

Այս գործարքները կատարվել են ստանդարտ վարկավորման, արժեթղթերի փոխառության և վարկավորման սովորական պայմանների ներքո:

21 Ապահովագրավճարներ

Հազար ՀՀ դրամ	2014										
	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Բեռներ	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտ. բխող պատ.	Ընդհանուր պատասխանատվություն	Ֆինանսական վնասներ	Աջակցություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Համախառն ապահովագրավճարներ	29,474	432,088	368,698	53,125	135,050	3,187	37,224	2,539	10,940	1,910,831	2,983,156
Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստում	(1,625)	(30,155)	(14,948)	3,504	(6,478)	(310)	(9,382)	(1,106)	(383)	(211,541)	(272,424)
Համախառն ապահովագրավճարների գծով հասույթ	27,849	401,933	353,750	56,629	128,572	2,877	27,842	1,433	10,557	1,699,290	2,710,732
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	(8,549)	-	(87,816)	(28,434)	(46,188)	(1,342)	(26,441)	(2,812)	-	-	(201,582)
Վերաապահովագրողների մասը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	824	-	(3,802)	(3,451)	(1,611)	(12)	4,213	777	-	-	(3,062)
Փոխանցված վաստակած ապահովագրավճարներ	(7,725)	-	(91,618)	(31,885)	(47,799)	(1,354)	(22,228)	(2,035)	-	-	(204,644)
Ապահովագրավճարների գծով զուտ հասույթ	20,124	401,933	262,132	24,744	80,773	1,523	5,614	(602)	10,557	1,699,290	2,506,088

Հազար ՀՀ դրամ	2013										
	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Բեռներ	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտ. բխող պատ.	Ընդհանուր պատասխանատվություն	Ֆինանսական վնասներ	Աջակցություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Համախառն ապահովագրավճարներ	8,190	533,604	308,260	67,902	130,125	1,373	24,889	-	1,116	1,409,316	2,484,775
Փոփոխություն չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստում	5,954	(108,969)	(46,269)	(396)	(11,739)	170	(3,706)	-	(303)	(179,356)	(344,614)
Համախառն ապահովագրավճարների գծով հասույթ	14,144	424,635	261,991	67,506	118,386	1,543	21,183	-	813	1,229,960	2,140,161
Վերաապահովագրողներին փոխանցված ապահովագրավճարներ	(6,879)	-	(81,680)	(39,757)	(62,062)	(984)	(15,248)	-	-	-	(206,610)
Վերաապահովագրողների մասը չվաստակած ապահովագրավճարների համախառն պահուստի փոփոխությունում	303	-	7,205	829	1,807	(128)	515	-	-	-	10,531
Փոխանցված վաստակած ապահովագրավճարներ	(6,576)	-	(74,475)	(38,928)	(60,255)	(1,112)	(14,733)	-	-	-	(196,079)
Ապահովագրավճարների գծով զուտ հասույթ	7,568	424,635	187,516	28,578	58,131	431	6,450	-	813	1,229,960	1,944,082

22 Վերապահովագրության միջնորդավճարների գծով զուտ եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2014			2013		
	Վերապահ- ովագրության միջնորդավճար	Վերապահ- ովագրության միջնորդավճար- ների վերադարձ- դարձրեցում- ների գծով	Զուտ վերապահ- ովագրության միջնորդավճար	Վերապահ- ովագրության միջնորդավճար	Վերապահ- ովագրության միջնորդավճար- ների վերադարձ- դարձրեցում- ների գծով	Զուտ վերապահ- ովագրության միջնորդավճար
Դժբախտ պատահարներ	1,396	(43)	1,353	1,289	(22)	1,267
Ցամաքային տրանսպորտ Բեռներ	1,632	(22)	1,610	9,953	(1,832)	8,121
Հրդեհ և բնական աղետներ	3,312	(632)	2,680	3,944	-	3,944
Ջրղեհ և բնական աղետներ	242	-	242	4,330	-	4,330
Ցամաքային տրանսպորտի օգտագործումից բխող պատասխանատվություն Ընդհանուր	5	-	5	96	-	96
Ընդհանուր	4,441	-	4,441	2,195	-	2,195
պարտավորություն Ֆինանսական վնասներ	106	(18)	88	-	-	-
Ընդամենը	11,134	(715)	10,419	21,807	(1,854)	19,953

23 Ներդրումային եկամուտ

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից տոկոսային եկամուտ	145,129	130,830
Վաճառքի համար նատչելի արժեթղթերից տոկոսային եկամուտ	16,875	16,875
Ընդամենը ներդրումային եկամուտ	162,004	147,705

24 Ապահովագրական հատուցումներ

Հազար ՀՀ դրամ	2014									
	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Բեռներ	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտ. բխող պատ.	Ընդհանուր պատասխանատվություն	Աջակցություն	ԱՊՊԱ	Ընդամենը
Ընթացիկ տարվա հատուցումներ	5,080	400,707	216,040	146	2,472	-	45,324	34	926,291	1,596,094
Փոփոխություն տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում	253	11,885	2,082	(284)	92	92	2,211	-	7,650	23,981
Փոփոխություն ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում	-	19,119	12,053	(179)	825	600	(624)	-	(21,174)	10,620
Ապահովագրական հատուցումներ	5,333	431,711	230,175	(317)	3,389	692	46,911	34	912,767	1,630,695
Ընթացիկ տարվա հատուցումներում վերապահովագրողի մաս	-	-	(107,428)	-	(371)	-	(33,144)	-	-	(140,943)
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	-	-	(1,667)	217	(39)	-	(1,624)	-	-	(3,113)
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	-	-	(4,729)	3	(530)	-	373	-	-	(4,883)
Ապահովագրական հատուցումներում վերապահովագրողի մաս	-	-	(113,824)	220	(940)	-	(34,395)	-	-	(148,939)
Զուտ ապահովագրական հատուցումներ	5,333	431,711	116,351	(97)	2,449	692	12,516	34	912,767	1,481,756

Հազար ՀՀ դրամ	2013									
	Դժբախտ պատահարներ	Առողջություն	Ցամաքային տրանսպորտ	Բեռներ	Հրդեհ և բնական աղետներ	Ցամաքային տրանսպորտի օգտ. բխող պատ.	Ընդհանուր պատասխանատվություն	ԱՊՊԱ	Ընդամենը	
Ընթացիկ տարվա հատուցումներ	-	181,777	188,139	5,580	1,464	-	478	752,723	1,130,161	
Փոփոխություն տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում	(2)	10,491	4,000	(63)	(734)	(74)	(32)	14,489	28,075	
Փոփոխություն ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում	(60)	27,740	5,407	148	(656)	(1,475)	479	1,253	32,836	
Ապահովագրական հատուցումներ	(62)	220,008	197,546	5,665	74	(1,549)	925	768,465	1,191,072	
Ընթացիկ տարվա հատուցումներում վերապահովագրողի մաս	-	-	(78,836)	(4,341)	(119)	-	(287)	-	(83,583)	
Տեղի ունեցած, սակայն չներկայացված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	2	-	(851)	79	652	38	23	-	(57)	
Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում վերապահովագրողի մասի փոփոխություն	42	-	(1,215)	182	(120)	753	(287)	-	(645)	
Ապահովագրական հատուցումներում վերապահովագրողի մաս	44	-	(80,902)	(4,080)	413	791	(551)	-	(84,285)	
Զուտ ապահովագրական հատուցումներ	(18)	220,008	116,644	1,585	487	(758)	374	768,465	1,106,787	

25 Ձեռքբերման ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Միջնորդավճարներ		
Առողջություն	33,118	87,297
Ցամաքային տրանսպորտ	10,785	9,428
Բեռներ	7,972	6,756
Հրդեհ և բնական աղետներ	3,151	3,220
ԱՊՊԱ	259,029	143,493
Այլ	3,046	2,100
Ընդամենը ձեռքբերման ծախսեր	317,101	252,294

26 Այլ գործառնական և վարչական ծախսեր

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Անձնակազմի գծով ծախսեր	482,520	406,967
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պահպանման ծախսեր	73,900	82,288
Գովազդի ծախսեր	58,876	15,894
Գործուղման ծախսեր	1,554	1,589
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	27,607	23,104
Վարձակալության գծով ծախսեր	137,146	126,115
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	17,433	20,890
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	12,000	5,710
Անվտանգության գծով ծախսեր	3,600	3,600
Ներկայացուցչական ծախսեր	11,497	5,875
Բանկային ծախսեր	895	663
Գրասենյակային ծախսեր	6,593	14,894
Տույժեր ու տուգանքներ	772	2,046
Անդամավճարներ, վճարներ բյուրոյին	62,500	39,862
Տպագրության գծով ծախսեր	11,862	8,749
Վթարների սպասարկում	35,476	26,825
Այլ ծախսեր	55,312	49,002
Ընդամենը այլ գործառնական և վարչական ծախսեր	999,543	834,073

27 Ակտիվների արժեզրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Այլ ակտիվներ (ծանոթ. 8)	9,803	1,659
Ապրիավագրության գծով դեբիտորական պարտքեր (ծանոթ. 10)	43,556	(4,162)
Ֆիզիկական անձանց տրված փոխառություններ (ծանոթ. 11)	857	151
Ընդամենը ակտիվների արժեզրկման ծախս	54,216	(2,352)

28 Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Ընթացիկ հարկի գծով ծախս	1,166	-
Հետաձգված հարկ	53,290	(12,494)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	54,456	(12,494)

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2013թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՄՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազմման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման բազայի միջև: Հետաձգված շահութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը կիրառելով:

Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի/(փոխհատուցման) և հաշվապահական վնասի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ՀՀ դրամ	Արդյունավետ դրույքաչափ (%)		Արդյունավետ դրույքաչափ (%)	
	2014		2013	
Վնաս մինչև հարկումը	(193,306)		(105,150)	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	(38,661)	(20)	(21,030)	(20)
Զնվագեցվող ծախսեր	78,905	41	8,592	8
Դրական փոխարժեքային տարբերություն	(2,558)	(1)	(56)	-
Գնահատված հարկային ակտիվի ճշգրտում	16,770	8	-	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում)	54,456	28	(12,494)	(12)

Ժամանակավոր տարբերությունների գծով հետաձգված հարկի հաշվարկ.

Հազար ՀՀ դրամ	Ֆինանսական արդյունքներով ճանաչված		Սեփական կապիտալում ճանաչված	
	2013			2014
Այլ պարտավորություններ	7,373	(385)	-	6,988
Հիմնական միջոցներ	2,334	(2,334)	-	-
Ապագա ժամանակահատվածի եկամուտներ	992	(191)	-	801
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	6,237	6,408	-	12,645
Այլ ակտիվներ	13,310	10,260	-	23,570
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	568	(568)	-	-
Փոխանցվող հարկային վնաս	43,789	(43,789)	-	-
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	74,603	(30,599)	-	44,004
Հիմնական միջոցներ	(12,415)	294	-	(12,121)
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(2,288)	-	811	(1,477)
Այլ ակտիվներ	(2,663)	1,231	-	(1,432)
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	(2,408)	(189)	-	(2,597)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(159)	98	-	(61)
Այլ ապահովագրության պահուստներ	(5,007)	(216)	-	(5,223)
Այլ պահուստներ	(1,114)	514	-	(600)
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	(4,305)	(21,632)	-	(25,937)
Վերապահովագրական ակտիվներ	(783)	(2,791)	-	(3,574)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(31,142)	(22,691)	811	(53,022)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	43,461	(53,290)	811	(9,018)

Հազար ՀՀ դրամ	2012	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2013
Այլ պարտավորություններ	3,026	4,347	-	7,373
Հիմնական միջոցներ	-	2,334	-	2,334
Ապագա ժամանակահատվածի եկամուտներ	2,730	(1,738)	-	992
Ապահովագրության պայմանագրերի գծով պարտավորություններ	8,076	(1,839)	-	6,237
Այլ ակտիվներ	12,025	1,285	-	13,310
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	-	568	-	568
Փոխանցվող հարկային վնաս	35,000	8,789	-	43,789
Ընդամենը հետաձգված հարկային ակտիվ	60,857	13,746	-	74,603
Հիմնական միջոցներ	(12,709)	294	-	(12,415)
Վաճառքի համար նատչելի ներդրումներ	(334)	-	(1,954)	(2,288)
Այլ ակտիվներ	(669)	(1,994)	-	(2,663)
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	(341)	341	-	-
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	(2,538)	130	-	(2,408)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(122)	(37)	-	(159)
Այլ ապահովագրության պահուստներ	(3,117)	(1,890)	-	(5,007)
Այլ պահուստներ	(1,216)	102	-	(1,114)
Հետաձգված ձեռքբերման ծախսեր	(5,931)	1,626	-	(4,305)
Վերաապահովագրական ակտիվներ	(959)	176	-	(783)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(27,936)	(1,252)	(1,954)	(31,142)
	-	-	-	-
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	32,921	12,494	(1,954)	43,461

29 Պայմանական պարտավորություններ
Իրավական և հարկային պարտավորություններ

Հայաստանում հարկային համակարգը համեմատաբար նոր է, և նրան բնորոշ է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների հաճախակի փոփոխությունները, որոնք երբեմն անհասկանալի են, հակասական և ենթակա տարբեր մեկնաբանությունների: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրման հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում, հարկային մարմինների կողմից չի կարող կիրառվել հավելյալ հարկերի պարտադրումներ, տույժեր և տուգանքներ, ավելի քան ստուգման նախորդող հաշվետու 3 տարիների համար:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել հարկային ռիսկեր, որոնք ավելի զգալի են քան այլ երկներում: Ղեկավարությունը համոզված է, որ պատշաճ կերպով կատարել է իր հարկային պարտավորությունները, հիմնվելով Հայաստանում կիրառվող հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատարանի որոշումների իր մեկնաբանությունների վրա: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և եթե ղեկավար մարմիններին հաջողվի հարկադրել իրենց մեկնաբանությունները, սպա այս ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է էական լինել:

Ղեկավարությունը համոզված է, որ Ընկերությունն իր գործունեությունը ծավալում է օրենսդրությամբ նախատեսված պահանջների շրջանակներում, և ամբողջությամբ կատարել է իր հարկային պարտավորությունները:

Ընկերությանը հատուցումների գծով ներկայացված դատական հայցերի հետ կապված ձևավորված պահուստները ներառված են Ընկերության Ներկայացված, սակայն չկարգավորված պահանջների պահուստում:

Ընկերությանը ներկայացվող մնացած դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

Հետևաբար Ընկերության կողմից իրավական և հարկային պարտավորությունների գծով համապատասխան պահուստավորումներ չեն կատարվել:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը որպես վարձակալող

Ընկերությունն իր գործունեությունն ապահովելու նպատակով կնքում է առևտրային վարձակալության պայմանագրեր շենք և տարածքներ վարձակալելու նպատակով:

Չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարվելիք ապագա ընդհանուր նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Մինչև 1 տարի	168,687	104,577
1-5 տարի	544,487	384,498
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	713,174	489,075

Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրության ոլորտը գտնվում է զարգացման փուլում, և այլ երկրներին հատուկ բազմաթիվ ապահովագրության ձևաչափեր հիմնականում դեռևս կիրառելի չեն: Այնուամենայնիվ, 2014թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող փոխադրամիջոցները ապահովագրված են: Քանի դեռ Ընկերությունը չի նախատեսել ամբողջական ապահովագրություն, առկա է ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է ունենալ բացասական ազդեցություն Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Սկսած 2010թ. Ընկերությունը հանդիսանում է Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ընկերությունների բյուրայի անդամ (այսուհետ՝ Բյուրո): Բյուրոյի նպատակը տուժած անձնանց շահերի պաշտպանությունն է և ԱՊՊԱ համակարգի կայունության և զարգացման ապահովումը: Բյուրոյին անդամակցող ապահովագրական ընկերությունները կատարում են միանվագ, պարբերական և լրացուցիչ վճարներ: Բյուրոն՝ երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձը անհայտ է (այս դեպքում հատուցվում է միայն տուժած անձանց պատճառված վնասը),
- պատճառվել է վնաս ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր,
- վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ,
- վնաս պատճառված ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ, եթե նա պարտավոր էր հատուցել պատճառված վնասը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ դեպքերում:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա բաժնետերերը, ղեկավար անձնակազմի անդամները, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձիք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության վերջնական վերահսկող է հանդիսանում Սուբիասյանների ընտանիքը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ներգրավված է լինում կապակցված կողմերի հետ մի շարք գործարքներում: Կապակցված կողմերի հետ իրականացված գլխավոր գործարքների մանրամասները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2014			2013		
	Բաժնետերեր	Կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետերեր	Կապակցված կողմեր	Ղեկավար անձնակազմ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն						
Պահանջներ ապահովադիրների նկատմամբ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	1,293	22,245	472	797	21,700	159
Տարվա ընթացքում ավելացում	76,295	15,848	915	65,673	26,951	996
Տարվա ընթացքում նվազում	(76,554)	(11,697)	(582)	(65,177)	(26,406)	(683)
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,034	26,396	805	1,293	22,245	472
Ապահովադիրներին վճարվելիք գումարներ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Տարվա ընթացքում ավելացում	40,914	3,078	-	3,810	1,602	-
Տարվա ընթացքում նվազում	(40,914)	(3,078)	-	(3,810)	(1,602)	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Ավանդներ և հաշիվներ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	260,782	-	-	49,196	-	-
Տարվա ընթացքում ավանդների (մարում)/տրամադրում	(63,264)	-	-	211,586	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	197,518	-	-	260,782	-	-

Հազար ՀՀ դրամ	2014			2013		
	Բաժնետե- րեր	Կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմ	Բաժնետե- րեր	Կապակց- ված կողմեր	Ղեկավար անձնակազմ
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	-	-	-	1,110	-	-
Տարվա ընթացքում տրամադրված փոխառություններ	-	-	-	(1,110)	-	-
Տարվա ընթացքում մարված փոխառություններ	-	-	-	-	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-	-	-	-
Այլ ակտիվներ						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	38,420	-	-	13,555	506	-
Այլ ակտիվների աժ	31,275	-	-	43,349	(506)	-
Այլ ակտիվների նվազում	(16,275)	-	-	(18,484)	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	53,420	-	-	38,420	-	-
Ստացված վարկեր						
Հաշվեկշիռ հունվարի 1-ի դրությամբ	186,148	-	-	24,627	-	-
Վարկի ստացում	-	-	-	821,428	-	-
Վարկի մարում	(52,556)	-	-	(659,907)	-	-
Հաշվեկշիռ դեկտեմբերի 31-ի դրությամբ	133,592	-	-	186,148	-	-
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն						
Համախառն ապահովագրավճարներ	76,295	15,848	915	65,673	26,951	996
Համախառն հատուցումներ	40,914	3,078	-	3,810	1,602	-
Չեռքբերման ծախսեր	10,000	-	-	18,484	-	-
Այլ ծախսեր	-	30,000	-	-	59,419	-

Ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումները հետևյալն են.

Հազար ՀՀ դրամ	2014	2013
Աշխատավարձ և պարգևատրումներ	111,190	80,956
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով կատարված փոխհատուցումներ	111,190	80,956

31 Իրական արժեքի չափումը

Ընկերության ղեկավարությունը սահմանում է իրական արժեքի պարբերաբար չափման քաղաքականությունն ու ընթացակարգերը չզանազանվող վաճառքի համար մատչելի արժեթղթերի և շենքերի համար:

Անկախ գնահատողները ներգրավվում են նշանակալի ակտիվների գնահատման մեջ, ինչպես օրինակ անշարժ գույքը, Անկախ գնահատողների ընդգրկումը յուրաքանչյուր տարի որոշվում է Ընկերության ղեկավարության կողմից:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Ընկերության ղեկավարությունը վերլուծում է ակտիվների և պարտավորությունների արժեքների փոփոխությունները, որոնք պետք է վերագնահատվեն համաձայն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Այս վերլուծությունների համար ճշտվում են հիմնական տվյալները, որոնք կիրառվել են նախորդ գնահատման ժամանակ, համադրելով գնահատման

հաշվարկի տեղեկատվությունը պայմանագրերի և այլ համապատասխան փաստաթղթերի հետ: Ընկերությունն անկախ գնահատողների հետ միասին համեմատում է յուրաքանչյուր ակտիվի և պարտավորության իրական արժեքի յուրաքանչյուր փոփոխությունը համապատասխան արտաքին աղբյուրների հետ, որոշելու համար, թե հիմնավորված է արդյոք տվյալ փոփոխությունը:

Ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված):

Մակարդակ 2- Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե՛ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):

Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

31.1 Իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվներ

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը, որոնք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում չեն չափվել իրենց իրական արժեքով և ըստ մակարդակի վերլուծում է դրանք իրական արժեքի հիերարխիայում, թե իրական արժեքի չափումը որ դասում է դասակարգված:

Հազար ՀՀ դրամ

	2014				
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	565,957	-	565,957	565,957
Վերաապահովագրական ակտիվներ	-	26,270	-	26,270	26,270
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	-	4,122	-	4,122	4,122
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	-	1,294,668	-	1,294,668	1,294,668
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	80,416	-	80,416	80,416
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ					
Ապահովագրական պարտավորություններ	-	261,942	-	261,942	261,942
Ապահովագրության գծով կրեդիտորական պարտքեր	-	101,749	-	101,749	101,749
Վարկեր ռեպո համաձայնագրերով	-	133,592	-	133,592	133,592
Այլ պարտավորություններ	-	53,851	-	53,851	53,851

Հազար ՀՀ դրամ

				2013	
	Մակարդակ 1	Մակարդակ 2	Մակարդակ 3	Ընդամենը իրական արժեք	Ընդամենը հաշվեկշռային արժեք
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ					
Ապահովագրության գծով դեբիտորական պարտքեր	-	423,313	-	423,313	423,313
Վերապահովագրական ակտիվներ	-	18,274	-	18,274	18,274
Ֆիզիկական անձանց տրամադրած փոխառություններ	-	6,288	-	6,288	6,288
Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	-	1,142,045	-	1,142,045	1,142,045
